Ուշադրություն

Այսուհետ ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները կկարողանան ստանալ բջջային ID SIM քարտ (mID)՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 572-Ն որոշման ա.թ. ապրիլի 24-ի փոփոխության:
ՀՀ-ում բջջային ID SIM քարտ (mID) կարող են ձեռք բերել այն օտարերկրացիները, որոնք ունեն Հանրային ծառայության համարանիշ և հետևյալ փաստաթղթերից որևիցե մեկը՝
✅ժամանակավոր կացության քարտ,
✅մշտական կացության քարտ,
✅հատուկ անձնագիր,
✅բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք:
⬇️Անհրաժեշտ քայլեր⬇️
✔️անձնագրով, կացության կարգավիճակի քարտով կա՛մ հատուկ անձնագրով, կա՛մ բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքով մեկ անգամ անհրաժեշտ է մոտենալ Վազգեն Սարգսյան 3 հասցեում գործող Հանրային ծառայությունների միասնական գրասենյակ՝ օտարերկրացիների հաշվառման համակարգում նույնականացման վերաբերյալ համապատասխան նշում կատարելու համար:
Այն օտարերկրացիները, որոնք 2024թ. օգոստոսի 23-ից հետո workpermit.am հարթակի միջոցով անձամբ ստացել են կացության քարտ կա՛մ ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքի քարտ և ստացել են էլեկտրոնային նամակ (բջջային ID SIM քարտ (mID) ստանալու հնարավորության վերաբերյալ), հնարավորություն ունեն Ծառայություն չայցելելու:
Նշված գործընթացն իրականացվելուց հետո օտարերկրացի օգտատերը կարող է մոտենալ նախընտրելի Բջջային կապի օպերատորի գրասենյակ և ձեռք բերել բջջային ID SIM քարտ (mID)՝ պարտադիր ներկայացնելով ստորև նշված փաստաթղթերը՝
✅վավեր կացության փաստաթուղթ,
✅անձը հաստատող փաստաթուղթ,
✅հանրային ծառայության համարանիշ:
📌Բջջային ID SIM քարտ (mID) ստանալու համար անհրաժեշտ է վճարել քարտի վերաթողարկման համար նախատեսված վճարը՝ 500 դրամ:
Նոր SIM քարտ գնելու դեպքում անհրաժեշտ է վճարել նաև սակագնային փաթեթի արժեքը՝ ըստ տվյալ օպերատորի սակագների:
📌Էլեկտրոնային թվային ստորագրության ծառայությունից օգտվելու համար պետք է կատարել տարեկան 3000 ՀՀ դրամ վճարում, որի պայմաններին հնարավոր է ծանոթանալ՝ անցնելով https://www.ekeng.am/hy/payments հղմամբ: